Մեծ Հաղթանակի 30 տարին

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Դ. Ա. ԴԱԼՈՅԱՆ

Գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը մեր հայրենիքի կյանքում ամենածանր փորձություններից մեկն էր: «Այդ պատերազմում,— ինչպես նշվում է ՍՄԿԿ Կենտկոմի՝ «1941—45 թվականների Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակի մասին» որոշման մեջ,— վճռվում էր աշխարհում առաջին սոցիալիստական պետության բախտը, համաշխարհային քաղաքակրթության, առաջադիմության և դեմոկրատիայի ապագան»:

Երբ վերջին 30 տարիների ընթացքում սոցիալիզմը անհաղթահարելի ուժ է դարձել և աշխարհն ընթանում է միջազգային լարվածության թուլացման ուղիով, ապա դրա համար մարդկությունը պարտական է Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակին և ՍՍՀՄ տնտեսական, քաղաքական ու ռազմական հզորացմանը, որը սոցիալիստական համագործակցության երկրների ամրապնդման և միջազգային լարվածության թուլացման գլխավոր գործոնն է:

Ֆաշիզմը համաշխարհային իմպերիալիզմի այն հարվածային ուժն էր, որի հետ իմպերիալիզմի առավել ռեակցիոն ու ագրեսիվ շրջանները մեծ հույսեր էին կապում՝ սոցիալիզմի, առաջադիմության և դեմոկրատիայի դեմ նրա մղած կատաղի պայքարում: Համաշխարհային ռեակցիան ֆաշիզմի հաղթանակի հետ էր կապում իր պլանների իրագործումը:

Սովետական Միությունը, հավատարիմ իր լենինյան խաղաղասիրական արտաքին քաղաքականության սկզբունքներին, երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին լարված պայքար էր տանում ֆաշիզմի սպառնացող վտանգի դեմ, մերկացնում նրա ռեակցիոն գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, նրա ռասիզմն ու նացիոնալիզմը. Սովետական կառավարությունը կոչ էր անում Եվրոպայի խոշոր պետություններին՝ միջոցներ ձեռնարկել Եվրոպայում կոլեկտիվ անվտանգությունն ապահովելու համար, ֆաշիզմին հակահարված տալու համար: Սակայն Անգլիայի, Ֆրան-

սիայի ու Եվրոպայի այլ երկրների և ԱՄՆ-ի կառավարող շրջանները, տարված հակակոմունիզմի և հակասովետիզմի մոլուցքով, ոչ միայն չէին ուզում Սովետական Միության սպասելիքները հաղորդել ֆաշիզմի ուժերը հզորացնելու և դրանք Սովետական Միության դեմ ուղղելու համար:

Անգլիական պահպանողականների կառավարությունը և Ֆրանսիան նույնիսկ Գերմանիայի հետ 1939 թ. սեպտեմբերի 3-ին պատերազմի մեջ մտնելուց հետո էլ չէին համաձայնվում համագործակցել Սովետական Միության հետ՝ ընդդեմ ֆաշիզմի: Պատերազմը, որ մղվում էր Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Գերմանիայի դեմ, պատմության մեջ հայտնի է որպես «տարօրինակ պատերազմ», որովհետև Գերմանիայի արևմուտքում բուն էության պատերազմական գործողություններ չէին ծավալվում: Դա հնարավորություն էր տալիս ֆաշիստներին իրենց գերազանց ուժերը պահել Արևելյան Եվրոպայում՝ Սովետական Միության դեմ ուղղելու նպատակով: Սակայն իր թիկունքն ապահովելու համար Հիտլերը նախ իրեն ենթարկեց Արևմտյան Եվրոպան և ապա ձեռնամուխ եղավ պատերազմի Սովետական Միության դեմ: 1941 թ. ապրիլ-մայիս ամիսներին ֆիտլերականները զավթեցին Հարավսլավիան և Հունաստանը:

Արբեցած ռազմական հեշտ հաղթանակներով, 1941 թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ հարձակում գործեց Սովետական Միության վրա, նպատակ ունենալով «կայծակնային» պատերազմի միջոցով մի քանի ամսվա ընթացքում ոչնչացնել Սովետական Միությունը (որին նացիստները համարում էին համաշխարհային տիրապետության հասնելու գլխավոր արգելք), ստրկացնել և կամ ֆիզիկապես բնաջնջել սովետական ժողովրդին:

Սոցիալիզմի առաջին երկրի վրա մահացու վտանգ կախվեց: Հիտլերը չէր թաքցնում, որ խոսքը վերաբերում էր ոչ միայն «կոմունիստական վտանգի» վերացմանը, այլև Սովետական Միությունում և ամբողջ Եվրոպայում «նոր կարգ» հաստատելուն:

Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության կոչով մեկ մարդու պես ոտքի ելավ Հայրենական մեծ պատերազմի ընդդեմ ֆաշիզմի: Ամենից մարդկության պատմության մեջ անհիշելի մի զոհեմարտ, որը պատերազմ էր ոչ թե սոսկ երկու պետությունների միջև, այլ իմպերիալիզմի առավել ռեակցիոն ու ագրեսիվ ուժերի և սոցիալիզմի միջև: Այդ պատերազմը ոչ միայն երկու հակադիր սիստեմների ռազմական ուժերի, այլև երկու իրարամերժ գաղափարախոսությունների, երկու հակադիր սիստեմների պայքար էր: Նրա ելքից էր կախված ոչ միայն սովետական ժողովրդի բախտը, սոցիալիզմի հակատագիրը, այլև համաշխարհային քաղաքակրթության հետագա զարգացման ուղիների հարցը: Հենց դա էլ պայմանավորում էր սովետական ժողովրդի, սոցիալիզմի առաջին երկրի պատմական միսիան՝ միջազգային պրոլետարիատի, գաղութային, կախյալ ու կիսակախյալ երկրների ժողովուրդների, համաշխարհային քաղաքակրթության հանդեպ:

Գերմանական ֆաշիզմը հակակոմունիզմի դրոշի տակ բացահայտ կերպով ձգտում էր համաշխարհային տիրապետության, գերմանական համաշխարհային կայսրության ստեղծման: Իր ագրեսիվ քաղաքականությամբ նա

ատելություն էր սերմանել ինչպես այն երկրների ժողովուրդների մեջ, որոնց նա գենոով էր տիրել, այնպես էլ աշխարհի ազատասեր բոլոր ժողովուրդների մեջ: Այդ էր պատճառը, որ վերջիններիս համակրանքը Սովետական Միության կողմն էր: Բարոյական այդ գործոնը առաջնակարգ դեր խաղաց հակահիտլերյան կոալիցիայի ձևավորման և ֆաշիզմի լծի տակ հեծող ժողովուրդների դիմադրական շարժման առաջացման գործում: Սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը փոխեց երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթը: Այն դարձավ հակաֆաշիստական, ազատագրական պատերազմ: Սովետական Միությունը գլխավորեց ֆաշիզմի դեմ Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների ազգային անկախության, դեմոկրատիայի և ազատության համար մղվող պայքարը: Դիմադրական շարժումը, որի ավանգարդում ընթանում էին բանվոր դասակարգը և կոմունիստական կուսակցությունները, դարձավ հակաֆաշիստական միջազգային դեմոկրատական շարժման բաղկացուցիչ մասը:

1942 թ. հունվարի 1-ին հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող 26 պետություններ ստորագրեցին դեկլարացիա՝ ֆաշիզմի դեմ համատեղ պայքար մղելու մասին: Սակայն պատերազմի ամբողջ ծանրությունը փաստորեն իր վրա կրեց Սովետական Միությունը, որը և գլխովին ջախջախեց գերմանական ֆաշիզմը:

Որքան ավելի ենք հեռանում Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի պատմական հաղթանակի տարեթվից, այնքան ավելի ցցուն ու բնկալելի է դառնում այդ հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը: Այդ հաղթանակի ռազմա-քաղաքական նշանակությունը չի սահմանափակվում նրանով, որ սովետա-գերմանական ռազմահակատում ջախջախվեց ֆաշիստական Գերմանիայի, Իտալիայի և նրանց արբանյակների՝ մինչև ատամները զինված 607 դիվիզիա, ոչնչացվեց թշնամու 77 հազար ինքնաթիռ, 48 հազար տանկ, 167 հազար ինքնագնաց հրանոթ և այլն: Ոչ էլ նրանով, որ ֆաշիստական բանակները դուրս վռնդվեցին սովետական հողից և Արևելյան Եվրոպայի երկրներից: Այդ հաղթանակը հնարավորություն ընձեռեց նաև կարճ ժամանակամիջոցում պարտության մատնել ճապոնական միլիտարիզմը և մարել պատերազմի օջախը Հեռավոր Արևելքում: Ֆաշիզմի գլխովին ջախջախման հետևանքով աճավոր վտանգից վերվեց համաշխարհային քաղաքակրթությունը: Միջազգային իմպերիալիզմը չկարողացավ իրագործել իր գլխավոր նպատակը՝ ոչնչացնել Սովետական Միությունը, սոցիալիզմի առաջին երկիրը և կոմունիստական ու բանվորական շարժումը ամբողջ աշխարհում: Այդ հաղթանակը Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրների ժողովուրդներին հնարավորություն տվեց տապալել իրենց երկրների հետադիմական վարչակարգերը և կանգնել ինքնուրույն զարգացման ուղու վրա: Ֆաշիզմի ջախջախումով Սովետական Միությունը օգնեց Ֆրանսիայի, ինչպես նաև Գերմանիայի, Իտալիայի և այլ երկրների ժողովուրդներին թոթափելու ֆաշիզմի լուծը և պայքարելու անկախության համար:

Արևելյան Եվրոպայի երկրները, որոնցում ապրում էր ավելի քան 100 միլիոն մարդ, կանգնեցին սոցիալիզմի ուղու վրա: Ասիայում կապիտալիզմի սիստեմից անջատվեցին և ինքնուրույն զարգացման ուղու վրա կանգնեցին երկրներ, որոնց բնակչության ընդհանուր թիվը անցնում էր մեկ միլիարդից:

Սոցիալիզմը դուրս եկավ մեկ երկրի շրջանակներից և վերածվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմի. դրանով իսկ վերջ տրվեց «կապիտալիստական շրջապատում» հասկացությանը: Կուբայի հերոսական ժողովուրդը առաջինը սոցիալիզմ հաստատեց Լատինական Ամերիկայում:

Երբ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը առաջին հարվածը հասցրեց իմպերիալիզմի գաղութային սիստեմին և սկիզբ դրեց ազգային-ազատագրական շարժումների ծավալմանը կախյալ ու կիսակախյալ երկրներում, ապա ֆաշիզմի դեմ տարած մեր պատմական հաղթանակը բուռ էության ավարտի հասցրեց այդ պայքարը, որի հետևանքով գաղութային ճնշման տակ գտնվող ժողովուրդների 98 տոկոսը ազատագրվեց իմպերիալիզմի ճնշումից և կանգնեց ինքնուրույն զարգացման ուղու վրա:

Մեր հաղթանակի հետևանքով ամրապնդվեց բանվորական ու կոմունիստական շարժումն ամբողջ աշխարհում և մասնավորապես կապիտալիստական երկրներում: Կոմունիստական կուսակցությունները ոչ միայն դուրս եկան ընդհատակից, այլև դարձան այդ երկրներում հասարակական մի այնպիսի ուժ, որի հետ հաշվի չնստել այլևս չի կարելի: Կոմունիստական միջազգային շարժումը այժմ աշխարհի առավել ազդեցիկ քաղաքական ուժն է:

Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակը և դրա հետևանքով սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումը վճռական դեր խաղացին հետպատերազմյան խաղաղության և ժողովուրդների անվտանգության ամրապնդման գործում:

Պատմական այն մեծ հաղթանակը, որի 30-ամյակը որպես համաժողովրդական մեծ տոն նշվում է, այս տարի, ձեռք է բերվել սովետական ժողովրդի մեծագույն զոհաբերությունների գնով: Այդ հաղթանակի նշանակությունը խորապես ըմբռնելու համար անհրաժեշտ է, թեկուզև համառոտ կերպով վերհիշել, թե ինչպիսի հակառակորդի հետ գործ ուներ սովետական ժողովուրդը և ինչի էր ձգտում այդ հակառակորդը:

Ֆաշիստական Գերմանիան Սովետական Միության վրա կատարվելիք հարձակման նախօրյակին իր կրնկի տակ էր դրել ամբողջ Արևմտյան Եվրոպան, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ և ստեղծել մի հզոր, մինչև ատամները զինված բանակ, որի շարքերում հաշվվում էր 8,5 միլիոն մարդ: Իմպերիալիզմի ռեակցիոն հարվածային ուժը՝ ֆաշիզմը նպատակ էր դրել գրավել Սովետական Միությունը, ոչնչացնել սոցիալիզմը, գրաված տերիտորիաներում ոչնչացնել 30 միլիոն մարդ, 50 միլիոն մարդկանց արտաքսել հեռավոր Սիբիր և Հյուսիսային Կովկաս, մեր երկրում բնակեցնել 10 միլիոն գերմանացիների, վերջ տալ սովետական ժողովուրդների պետականությանը և երկիրը վերածել ֆաշիստական Գերմանիայի գաղութի:

Ֆաշիստական զորքերի հարձակման ռազմահակատի ընդհանուր երկարությունը պատերազմի առաջին ամիսներին կազմում էր 4,5 հազար կիլոմետր: Այդպիսի ռազմահակատ պատերազմների պատմության մեջ գոյություն չի ունեցել: Սովետա-գերմանական ռազմահակատում պատերազմի առաջին շրջանում կենտրոնացված ֆաշիստական 190 դիվիզիաներում հաշվվում էր 5,5 միլիոն մարդ:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության մեծագույն ծառայությունը կայանում է, նրանում, որ կարճ

ժամանակամիջոցում նրանք կարողացան մեր երկիրը վերածել ռազմական մի մեծ նամբարի, որտեղ ամեն ինչ արվում էր թշնամու դեմ հաղթանակն ապահովելու համար:

Պատերազմի ամենածանր օրերին, երբ ֆաշիստական Գերմանիայի գերակշռող ուժերի հնշման տակ մեր զորքերը ստիպված էին քայլ առ քայլ թողնել մեր գյուղերն ու քաղաքները, երբ թշնամին հասել էր Մոսկվայի մերձակայքը, պաշարել Լենինգրադը և հոխորտում էր այդ քաղաքները «հողին հավասարեցնել», երբ մարտեր էին մղվում Կովկասի նախալեռներում, երբ օկուպացվել էին Լատոնիան, Լիտվան ու Լատվիան, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մոլդավիայի տերիտորիաների մեծ մասը, երբ մեր երկիրը կրում էր նյութական և մարդկային հսկայական զոհեր,— կուսակցությունը կարողացավ վառ պահել սովետական ժողովրդի հավատը հաղթանակի նկատմամբ և նրան մարտի մղել ֆաշիստական հորդաների դեմ: Կուսակցությունը հանդես եկավ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգով և կարմիր բանակի առջև խնդիր դրեց՝ արյան գնով պաշտպանելու սովետական երկրի յուրաքանչյուր թիզ հողը: Ստեղծվեց Պաշտպանության Պետական Կոմիտեն, որի ձեռքում կենտրոնացվեց պետական ու ռազմական ամբողջ իշխանությունը: Միջոցներ ձեռնարկվեցին երկրի արևմտյան մարզերից արդյունաբերական ձեռնարկությունները ու բնակչությունը արևելք տեղափոխելու ուղղությամբ: Վերակառուցվեց ռազմական կադրերի պատրաստման ամբողջ գործը: Կուսակցությունն իր ձեռքը վերցրեց պարտիզանական շարժման ղեկավարությունը:

Արդեն 1942—1943 թթ. ձմեռային կամպանիայում և հատկապես Ստալինգրադի տակ գերմանա-ֆաշիստական զորքերի գլխովին չախչախումը արմատական բեկում մտցրեց պատերազմի ընթացքի մեջ. սկսվեց մեր հայրենիքի սահմաններից թշնամուն մաստայաբար դուրս շպրտելու պրոցեսը: Դրությունը շտկելու ուղղությամբ ֆաշիստական Գերմանիայի բոլոր ճիգերը ապարդյուն եղան: Սովետական զորքերը ընդհանուր հարձակման անցան Հյուսիսային Կովկասում, Դոնի շրջանում, Վորոնեժի տակ, Օրյոլի և Բելգորոդի մարզերում, հեղափոխեցին Լենինգրադի պաշարման օղակը, հարյուրավոր կիլոմետրեր թշնամուն դեն շպրտեցին Մոսկվայի մատույցներից: Կուրսկի տակ տարած պատմական հաղթանակը ավարտեց պատերազմում արմատական բեկման պրոցեսը, որից հետո կարմիր բանակը պատերազմների պատմության մեջ չտեսնված մարտեր մղեց ֆաշիստական հորդաների դեմ, չախչախելով նրա գերազանց ուժերը և 1944 թ. աշնանը ավարտելով սովետական ողջ տերիտորիայի ազատագրումը:

Մինչ այդ, 1944 թ. մարտին սովետական զորքերը արդեն մտել էին Ռումինիա և դրանով իսկ սկիզբ դրել ֆաշիզմից Եվրոպայի ժողովուրդների ազատագրմանը: 1945 թ. գարնանը սովետական զորքերը ազատագրեցին Արևելյան Եվրոպայի ստրկացված երկրները և անձեղ մարտերով մտան ֆաշիստական Գերմանիայի սահմանները:

Պատերազմի ծանր օրերին սովետական ժողովուրդը դրսևորեց իսկական հերոսություն՝ ռազմաճակատում և թիկունքում կռելով մեր հաղթանակը և դրանով իսկ դրսևորելով իր հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի գա-

գափարներին, սովետական իշխանությանն ու կոմունիստական կուսակցությանը:

Ֆաշիստական Գերմանիան անասելի վնասներ հասցրեց մեր երկրին: Ոչնչացվեցին 1710 քաղաքներ և քաղաքատիպ ավաններ, ավելի քան 70 հազար գյուղեր, 32 հազար արդյունաբերական ձեռնարկություններ, շարքից հանվեց 65 հազար կմ երկաթուղագիծ, ոչնչացվեցին 98 հազար կոլտնտեսություններ, 1876 սովետական տնտեսություններ, 2890 մեքենա-տրակտորային կայաններ: Սովետական Միության տնտեսական կորուստները կազմեցին 2 տրիլիոն 600 միլիարդ ռուբլի: ԽՍՀՄ-ի տերիտորիայում ֆաշիստները ոչնչացրեցին 6 միլիոն խաղաղ քաղաքացիների և 4 միլիոն զինվորականների, 1 միլիոն սովետական քաղաքացիներ քշվեցին Գերմանիա: Նրանցից շատերը տանջամահ եղան ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում՝ Բուխենվալդում, Օսվենցիմում, Մայդանեկում և մահվան այլ ճամբարներում: Մեր երկրի մարդկային զոհերի ընդհանուր թիվը կազմեց 20 միլիոն մարդ, 25 միլիոն մարդ մնաց անօթևան:

1945 թ. ապրիլի 30-ին սովետական զորքերի բեռլինյան օպերացիան, որի ժամանակ ոչնչացվեց հակառակորդի 93 դիվիզիա, ավարտվեց պատմական հոյակերտ հաղթանակով: Ռայխստագի վրա բարձրացվեց սովետական կարմիր դրոշը: Մայիսի 8-ին Բեռլինի արվարձաններից մեկում՝ Կարլսհորստում գերմանական զեռազույն հրամանատարության ներկայացուցիչները ստորագրեցին Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Ավարտվեց ֆաշիստական Գերմանիայի դեմ 1418 օր տևած Հայրենական մեծ պատերազմը:

Որո՞նք էին սովետական ժողովրդի հաղթանակի աղբյուրները.

Այդ հարցին պատասխանելուց առաջ անդրադառնանք մի հանգամանքի. որ մեր հաղթանակից ընդամենը 40 տարի առաջ ցարական Ռուսաստանը խայտառակ պարտություն կրեց ռուս-ճապոնական պատերազմում: Ո՞րն էր այն ուժը, որ պատմական չափազանց կարճ ժամանակամիջոցում Ռուսաստանը վերածեց մի երկրի, որը կարողացավ դիմադրել բատ էության ամբողջ կապիտալիստական Եվրոպայի (բացի Անգլիայից) ռազմական մեքենային, ջախջախել և ծունկի բերել համաշխարհային իմպերիալիզմի հարվածային ջոկատին՝ ֆաշիզմին. Այդ ուժը սոցիալիստական հասարակական ու պետական կարգն էր, որը հանդիսացավ մեր պատմական հաղթանակի գլխավոր աղբյուրը: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետևանքով իշխանությունն իրենց ձեռքը վերցրած բանվորները ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կառուցեցին սոցիալիստական հասարակարգ, որը հնարավորություն տվեց պատերազմի ժամանակ երկրի էկոնոմիկան կարճ ժամանակամիջոցում փոխադրել ռազմական ռելսերի վրա և ավելի շատ ռազմամթերք ու հանդերձանք արտադրել, քան ֆաշիստական Գերմանիան և Արևմտյան Եվրոպայի նրա բոլոր դաշնակից պետությունները ու նվաճված երկրները: Այսպես, եթե ռազմական ինքնաթիռների տարեկան միջին արտադրությունը Գերմանիայում կազմում էր 19725 հատ, ԽՍՀՄ-ում այն կազմում էր 27007 հատ, տանկերի արտադրությունը Գերմանիայում՝ 13450, իսկ ԽՍՀՄ-ում՝ 23774 և այլն: Այդ թվերի նշանակությունը ավելի պարզ կլինի, եթե հիշենք, որ ֆաշիստական Գերմանիայի ռազմա-տնտեսական ռեսուրսնե-

որ պատերազմի նախօրյակին մեկուկես-երկու անգամով գերազանցում էին ՍՍՀՄ-ի առկա ռեսուրսները, իսկ պատերազմի առաջին փուլում, երբ մեր արդյունաբերական կենտրոնների մեծ մասն ընկավ թշնամու ձեռքը և մենք ծանր կորուստներ կրեցինք, ուժերի փոխհարաբերությունը ավելի վատացավ ի վնաս ՍՍՀՄ-ի: Սոցիալիստական հասարակարգն էր, որ մեր ժողովրդին հնարավորություն տվեց արագ կերպով վերակառուցել երկրի էկոնոմիկան պատերազմի պահանջներին համապատասխան:

Սոցիալիզմի հաղթանակի հետևանքով մեր երկրում ամրապնդվել էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, սոցիալիստական ազգերի եղբայրական բարեկամությունն ու սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը, սովետական բազմազգ պետությունը: Պատերազմի տարիներին էլ ավելի ամրապնդվեցին մեր հաղթանակի այդ գործոնները: Սոցիալիստական զաղափարախոսությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմը այն կենսահաստատ ուժն էր, որ ցեմենտում էր մեր ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը:

«Սովետական ժողովրդի միասնությունը,— նշել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ կարդացած զեկուցման մեջ, — իր ամենահամոզիչ արտահայտությունը գտավ հանուն սոցիալիստական հայրենիքի պաշտպանության կատարված հերոսական սխրագործությունների:

Մեր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների դաշինքն ու բարեկամությունը դիմացան այնպիսի ծանրագույն փորձության, ինչպիսին էր Հայրենական մեծ պատերազմը: Միասնական սովետական հայրենիքի որդիներն ու դուստրերը այդ պատերազմում ոչ միայն պատվով պաշտպանեցին իրենց սոցիալիստական նվաճումները, այլև համաշխարհային քաղաքակրթությունը փրկեցին ֆաշիստական բարբարոսությունից, դրանով իսկ հզոր աջակցություն ցույց տալով ժողովուրդների ազատագրական պայքարին»[1]:

Հայրենական պատերազմում տարած մեր հաղթանակը նշանավորեց սոցիալիստական, մարքս-լենինյան զաղափարախոսության հաղթանակը ֆաշիզմի ռեակցիոն զաղափարախոսության նկատմամբ:

Սովետական բանակը, որի շարքերում կռվում էին մեր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների զավակները, մղում էր արդարացի պատերազմ և պաշտպանում իր հայրենիքը: Դրանում էր նրա անձնազոհության աղբյուրը: «Ամեն տեսակ պատերազմում,— նշել է Վ. Ի. Լենինը,— հաղթանակը վերջին հաշվով պայմանավորվում է այն մասսաների ոգու վիճակով, որոնք ռազմի դաշտում թափում են իրենց արյունը: Համոզմունքը պատերազմի արդարացիության նկատմամբ, իրենց եղբայրների բարօրության համար, իրենց կյանքը զոհաբերելու անհրաժեշտության գիտակցությունը բարձրացնում է զինվորների ոգին և նրանց ստիպում անասելի դժվարություններ կրել... զենքը վերցրած յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի գիտի, թե ինչի համար է գնում, և գիտակցաբար թափում է իր արյունը հանուն արդարության ու սոցիալիզմի հաղթանակի»[2]:

---

1 *«Սովետական Հայաստան», 22 դեկտեմբերի, 1972 թ.:*

2 *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 154:*